

## ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆ

№ 6

1962

Ա.Ա.ՏՎԻՔԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՄԻԶՆԱԴԱՐՅԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵԶ

6

Հայ միջնադարյան մանրանկարչությունը հանդիսանում է այն մեծ գանձարաններից մեկը, որը դալիս է տուարկայական վաստերով հարստացնելու միջնադարյան մշակութիվ բնագավառների մասին մեր գիտելիքները։ Մեր պատմիչների երկերում և այլ կարգի սկզբնաղբյուրների մեջ առկա վաստերը, որոնք վերաբերում են հայ միջնադարյան արվեստների ու արհեստների, գրչության ու գիտության այնաև բնագավառներին՝ ավելի պարզ ու որոշակի են պատճենում միջնադարյան մանրանկարիչների վարպետ ձեռքի տակից դուրս եկած գունագեղ պատկերների շնորհիվ։ Դրանք ցրված են Մատենադարանի նկարագարդ հարյուրավոր ձեռագրերում, առավել կամ նվազ շափով, որոնց մեջ, բացի տերունական կանոնական ու պարտապիր համարվող նկարներից, երբեմն ծաղկողները նկարել են նաև պարականու պատկերներ։ Պարզ է, որ մանրանկարիչները որոշ տուարկաներ նկարելիս պետք է օգտվեին իրենց սպրած ժամանակաշրջանում, իրենց շրջապատում դանվող և գործածության մեջ եղող առարկաներից։ Եվ իրոք, ձեռագրերում այդպիսի նկարների թիվը բավականին մեծ է, նրանք վերաբերում են կյանքի բազմաթիվ բնագավառների՝ երբեմն նկարված հենց տերունական նկարների հետ միատեղ, կամ էլ շատ աճախ, որպես լուսանցագարդ։

Վաղ շրջանի ձեռագրերում իրական կյանքից վերցված իրերի և տուարկաների պատկերներ ունեած ենք դանում, որովհետեւ այդ շրջանի ձեռագրերի մանրանկարները, գրեթե անխոտիր, խիստ կանոնական բնույթ ունեն, իսկ լուսանցագարդները կատարվել են միատեսակ, հաճախ միադույն զեկորատիվ շրջանակների ձևով։ Ի՞արկե, սրանք ևս զերծ շեն աշխարհիկ տարրերից։ Հայտնի են X—XI դարերից մեզ հասած ձեռագիր պահպանակներ, որոնք նկարագրությամբ են, չիմնականում, իրական կյանքի մտուիլներով։ Դրանցից ուշագրամի է Մատենադարանի № 3974 ձեռագրի պահպանակի վրա նկարված սուրբ Գևորգի պատկերը՝ վահանով ու նիզակով, զինվորական համագետստում՝ մի խելական զինվորի կերպար, կամ № 8205 ձեռագրի մագաղաթյա պահպանակի նկարագարդ խորանի պատուղները և այլն։

XIII դարից սկսած, հետզետե, ձեռագրերի մեջ ավելի շատ են երեան դալիս ունեալ իրերի և տուարկաների պատկերները։ Դրանք շատ են հատկապես բուն Հայաստանի XIII—XVI դարերի մանրանկարներում։

Ավելի ուշ, XVII դարի ձեռագրերում, աշխարհիկ նկարները հեղեղում են նոր Զուղացի, Ղրիմի, Կ. Պոլսի ձեռագրերը։ Զնայած դրանք շատ հաճախ ընդուրինակվել են մեկը մյուսից և արվեստի տեսակետից թույլ գործեր են, սակայն իրենց աշխարհիկ նկարներով ուշագրամ են և արժեքավոր։ Այս ժամանակ

ձեռադրի նկարագարգումը արդեն դարձել էր արհեստ. այն զրվում էր, նկարագարդում, հաճախ նույնիսկ կազմվում նախապես շունենալով պատվիրատու ձեռագիրը պատրաստվում էր շուկայում վաճառվելու համար։ Այդ իսկ պատճառով մանրանկարիչը շահագրգումած էր հնարավորին շափ «Հքեղ» դարձնել իր ձեռագիրը։ Եվ ահա, սովորածավալ Աստվածաշնչերի և ծիսական բովանդակություն ունեցող այլ ձեռագրերի զրեթե բոլոր լուսանցքները շուալլորեն զարդարվում են բազմապիսի, տվյալ թերթի բովանդակության հետ առնչվող ոչ կանոնական բնույթի մանրանկարներով։

Այդ մանրանկարներից առանձնահատում հետաքրքրություն են ներկայացնում միջնադարյան արհեստներին վերաբերող նյութերը։ Սաղկողը, աւենիք, շինարարություն է պատկերում, և մենք տեսնում ենք ժամանակի սրմնադրին, ծիփագործին, այլ դեպքերում՝ հյուսնին, դարբնին, ջուրհակին՝ աշխատանքինց, աշխատանքային իրենց դործիքներով։

Ոչ պակաս հետաքրքրություն են ներկայացնում նաև միջնադարյան զենքերի մանրանկար օրինակները։ Բազմաթիվ ձեռագրերում կարելի է տեսնել վահանների ու նիզակների, սմբինների, թրերի, դաշույնների, նետերի ու կապարձների, ինչպիսի և այդ զենքերը կրող զինվորների, նետաձիգների, գուրզերով մենամարտողների, զրահներ հագած մարդկանց գողտրիկ պատկերներ։

Հարուստ նյութ կարելի է գտնել նաև գյուղատնտեսության վերաբերյալ։ Համեմատարար ավելի ուշ՝ XVII դարի ձեռագրերում, պատկերված ենք գտնում կոթանով վարի, ցանքի, հունձի, կալսման տեսարանների, որոնցում, բնականարար, նկարված են նաև բազմաթիվ գյուղատնտեսական դործիքներ։ Զգացվում է ծաղկողների առանձնահատում վերաբերմունքը՝ իրենց հարազատ կենցաղային այս նկարների նկատմամբ։

Միջնադարյան բրուտագործության զեղեցիկ օրինակ են հանդիսանում ձեռագրերում նկարված սակորները, թասերն ու ծաղկամանները, կժերն ու կարասները, որոնցից մեծապես կարող են օգտվել մեր ժամանակի արվեստագիտներ։

Պակաս հետաքրքրություն չեն ներկայացնում որսորդության տեսարաններ պատկերող մանրանկարները, հատկապես թորոս Ռոսլինին վերագրվող ձեռագրերում, Կեղծ-Կալիսթենիսի «Պատմութիւն Աղեքսանորի Մակեդոնացւոյ» վեպի նկարագրություններում և մի շաբթ այլ ձեռագրերի խորաններում ու լուսանցագարդներում։

Վանա լճի շրջակայրում և Կիլիկիայում նկարագարդված ձեռագրերի մեջ կան մանրանկարներ, որոնք օգնում են ծանոթանալու միջնադարյան Հայաստանում կիրառության մեջ եղող նավակների (հատկապես առաջաստանավերի) տեսակներին և ձևարտության ձևերին։

Մանրանկարներում առատ նյութ կա նաև թատերական արվեստի պատմության ուսումնասիրմանը նպաստող։ Ուշագրավ են հատկապես պարագնեստը պատկերող բազմաթիվ նկարները. վարձակներ՝ իրենց բնորոշ տարադներով, դերասաններ՝ երթեմն զիմակներով, հաճախ նկարված զարդարաներէ ձևով, իրեւ միմեր և կատակերգակներ և այլն և այլն։

Բուն Հայաստանի մանրանկարչությունն ունի իր շատ բնորոշ ոճը, այստեղ նկարագրված ձեռագրերը քիչ են և նիթարեկին դրսի աղղեցությանը և պահպանել են կենցաղային բովանդակության շատ նկարներ։ XIV—XV դարերի ձեռագրերում հանդիպում են իշխանների, զինվորականների, հոգևոր և աշխար-

հիկ անձնավնարությունների, ինչպես նաև աշխատավոր մարդկանց՝ երկրադրների, արհեստավորների, հովիվների պատկերներ, իրենց բնորոշ ստարտպներով: Բազմաթիվ են նաև կանացի տարազներ պատկերող նկարները:

Վերջապես, մանրանկարչությունը հարուստ աղբյուր է հանդիսանում նաև հայկական երաժշտական դործիքների պատմության ուսումնասիրության համար:

Միջնադարյան Հայաստանի մշակույթի, արհեստների և կենցաղի մի շարք մութ կողմերի լուսարանմանը մեծապես նպաստով մեր ձեռագրերի մանրանկարները գիտական հասարակայնության տրամադրության տակ դնելու մատուցությամբ, մենք տարիների ընթացքում ձեռագրերից ընարել և ընդօրինակել ենք բայ բովանդակության տանձին թերթիկների վրա մանրանկարչական այդ նյութերը, նպաստակ ունենալով դրանցից կազմել մի սովոր ալբոմ:

Առ այսօր պատրաստ են արդեն 42 թերթեր՝ բազմաթիվ մանրանկարներով, որոնք վերաբերում են Հետեւալ թիմաներին.

1. Երաժշտական դործիքներ	— 6 թերթ
2. Արհեստներ	— 4 թերթ
3. Զենքեր	— 4 թերթ
4. Գյուղատնտեսական աշխատանքներ և գործիքներ	— 3 թերթ
5. Գրչադրական դործիքներ	— 4 թերթ
6. Սափորներ	— 3 թերթ
7. Պարարվեստ	— 1 թերթ
8. Պատկանագույն	— 1 թերթ
9. Տարազ	— 5 թերթ
10. Որսորդություն	— 4 թերթ
11. Զենորսություն	— 1 թերթ
12. Նավակներ	— 1 թերթ
13. Սովորակ մարմնամարզություն	— 1 թերթ
14. Թատերական դիմուկներ	— 2 թերթ
15. Կահույք	— 2 թերթ

Ըստրել ենք արդեն ուշագրավ նյութեր նաև նշանավոր անձանց դիմանկարների ընդօրինակման համար:

Դնդորինակությունները կատարված են նույնությամբ, առանց փոփոխման ենթարկելու ընագիր մանրանկարները, պահպանելով նկարի թե մեծությունը և թե գույները: Սակայն, նկատի ունենալով այն հանգամանքը, որ որոշ առարկաներ՝ հատկապես զենքերը և գրչադրական ու արհեստավորական դործիքները շատ մանր նկարված լինելով դժվար պետք է դիտվեին և ուսումնասիրվեին մանագիտների կողմից, որոշ դեպքերում ընդօրինակելիս մեծացրել ենք նրանց չափը:

Սույն հոդվածի նպատակն է, հրատարակելով Երաժշտական դործիքների մանրանկարներից կազմված մեր թերթիկները, նպաստել Հայ բազմադարյան երաժշտության պատմության ուսումնասիրման շնորհակալ դործին:

Ստորև, երաժշտական դործիքները բաժանելով՝ հարվածային, փողային և բարձրային ենթախմբերի, մենք անհրաժեշտ ուվայներ ենք հաղորդում այն ձեռագրերի մասին, որոնցից քաղված են երաժշտական դործիքներին նվիրված

մեր թերթիկների նյութերը, միաժամանակ համառոտակի նկարագրում ենք այդ գործիքները, ենելով նրանց արտաքին հատկանիշներից։ Այդ նյութերի մասնագիտական խորն ուսումնասիրությունը դուրս է՝ մեր նոպատակից ու հետրավորություններից։

### Հարվածային երաժշտական զուծիւներ

Զեռագրերում նկարված հարվածային գործիքները կարելի է բաժանել մի շարք տեսակների։

Դափ. — Դափի ամենահին օրինակի պատկերը հանդիպում ենք 1286 թվականին Երիխիայում նկարագրված ձաշոցում։ Զեռագրի մանրանկարները վերագրվել են Թորոս Ռոսլինին, բայց համարարար պատկանում են նրա կըրտսեր ժամանակակից անանուն մի նկարչի։ Զեռագրի 15ա էջի լուսանցազարդում նկարված է՝ մի պարունի՝ ձեռքին դափ (Մատենադարան, ձեռ. № 979)։ Նման մի դափ տեսնում ենք, դարձյալ կնոց ձեռքին, 1337 թվականին Դավիթում (Թամբրիկ) նկարագարդված ձեռագիր Ավետարանում, որը Ավագ ծաղկողի գործն է։ Այս ձեռագրի 246ա էջում կանգնած են երկու նվազող կանայք, որնցից մեկը դափ է՝ զարկում (Մատենադարան, ձեռ. № 212, թերթ II, նկ. 13), 1462 թվականին Կոտոց անապատում, Մինաս ծաղկողի կողմից նկարագարդված Հայոմավուրքի 140ա էջի լուսանցազարդում նկարված է զուսան՝ դափով։ Որ իրոք նվազողը զուսան է, այդ մասին նույն էջի տեքուում կարգում ենք. Վկայաբանութիւն սրբոց Պորփիրոսի զուսանին. Սուրբն Պորփիրոս էր յաղղէն ասիանու ծրնեալ և սնեալ յեփեսոս քաղաքի, և էր ճարտար զուսան ի դիւտկան թատերու հեթանոսաց խաղացողու...» (ձեռ. № 4883, թերթ III, նկ. 3):

Դափի օրինակներ կան նաև զարդատառերում, հատկապես սկզբնաթերթի զարդանկար տառերի մեջ. օրինակ, 1590 թվականին, Մոկաց աշխարհում, ներսեսի կողմից նկարագարդված Ավետարանի 22ա էջում (Մատթեոս ավետարանի սկզբնաթերթը) «Ե» տառը կերտված է դափ զարկող մարզու պատկերի օգտագործումով (ձեռ. № 5783, թերթ IV, նկ. 6): Ճիշտ նույն ձեփ դարդատառ կա նաև № 5634 ձեռագրում։

Թմրուկ — Զեռագրերում հանդիպած թմրուկների տեսակները հիմնականում կարելի են բաժանել երկու խմբի։

ա. Միաբանք թմրուկներ — Սրանք հարվածվում են մի կողմից միայն: Այս թմրուկը ձագարածն է. լայն մասը, որի վրա քաշված է թաղանթը, հարվածվում է փայտիկներով: Իսկ հակառակ կողմը սրածայր է: Երբեմն այս թմրուկները նկարված են երկուոք իրար կամած: Հարվածող փայտիկները լինում են տարրեր ձեռքի՝ սրածայր, կլոր, կեռծայր և այլն: Այս տիպի թմրուկները հանդիպում ենք XVII դարում նկարագարդված Աղեքսանդր Մակեդոնացու վարք-պատմության այն ձեռագրում, որի ծաղկողն է Հակոբ Զուզայեցին (ձեռ. № 5472, թերթ V, նկ. 2, 4):

բ. Երկրադանք թմրուկներ — Այս թմրուկները սովորաբար նկարված են լինում թմրկահարի վզից կախված և հարվածվում են երկու կողմից: Սրա մի օրինակը գտնում ենք դարձյալ Հակոբ Զուզայեցու վերոհիշյալ ձեռագրի մեջ (ձեռ. № 5472, էջ 80ա, թերթ V, նկ. 6), ինչպես նաև XVII դարի № 9599 ձեռագրում, որի 192ր էջին նկարված է՝ մի թմրկահար, վզից կախված երկթաղանթ թմրուկ, որին նաև հարվածվում է փայտիկներով երկու կողմից, երկու ձեռ-

րով: Նկարի կողքին գրված է. «Մարդ մի և է, ձեռն ստվարալ և տապայլաղ» (թերթ II, նկ. 4): Նման թմրուկ կա նաև № 6670 ձեռագրում:

**Սնծղա** — Հարվածային գործիքների թիվն է, պատկանում նաև ծնծղան՝ երկու մետաղյա սկավոտակներ, որոնք իրար բախվելով ձայն են արձակում: 1462 թվականին Կարապետ ծաղկողի կողմից Արձեշում նկարագրված Ավետարանի Յա Էջում պատկերված տերունական նկարում կա ուշագրավ մի ծնծղա (ձեռ. № 4778, թերթ V, նկ. 13): Ճիշտ նման մի պատկեր գտնում ենք նաև Չեստեր Բիտի անձնական զրադարանի հայերեն ձեռագրերի ողբոփ. Սիրարիի Տեր Ներսիսյանի կազմած Յուցակի ալբոմում: Այդ ձեռագրից գրված է, Այոմիքում, 1536 թվականին:

Ծնծղայի ավելի լավ օրինակներ կան № № 388, 391 և այլ ձեռագիր Խորհրդատեսրերում, որը պատկերված է եկեղեցական արարություն:

**Քշոց** — Երաժշտական գործիքների շարքին կարելի է զասել նաև քշոց: Մա երկար կոթով մետաղյա բոլորակ է, շուրջը բոժոժներ կախված: Օրինակ, № 397 ձեռագիր Խորհրդատեսրի Տա Էջում նկարված է քահանա զիրքը ձեռքին, նրա ետևին կանգնած է մի սարկավակ, որը քահանայի պիտամիերեւում պահել է քշոց:

Քշոցի օրինակներ մեծ մասամբ պատահում են Մաշտոցներում. օրինակ 1656 թվականին, նոր Զուղայում, Հայրապետ ծաղկողի կողմից նկարագրված № 953 ձեռագրի 133ր Էջում (թերթ I, նկ. 1): Նման պատկերներ կան նաև № 1672, 6394 և այլ ձեռագրերում:

**Կաստանետ** — Ձեռագրերում հանդիպում ենք նաև կաստանետ կոչվող հարվածային գործիքին, ուստի գործածել են պարուճները: Կաստանետը պատրաստվում էր ամուր փայտու փոքրիկ ձողիկներից, որուցից պարուճին զույգ բանում էր երկու ձեռքերի սփերում և պարելու ընթացքում զարկում իրար, համապատասխան պարի ոիթմին:

Այս գործիքի մի պատկեր առաջին անգամ տեսնում ենք 1320 թվականին Սարգս Պիծակի կողմից նկարագրված ձեռագրի Ավետարանի (ձեռ. № 7651) 43ա Էջում: Մանրանկարում պատկերված է Հերովդեկի աղջիկ Սալոմեն:

Նման գործիք կա նաև ավելի ուշ՝ 1601 թվականին Հակոբ Զուղայեցու կողմից նկարագրված № 7639 ձեռագրի Ավետարանի 26ր Էջում, կաստանետով պարուճներին այսակա ավելի մեծադիր է, և հետաքրքիր իր տարագով (թերթ IV, նկ. 3):

Հետաքրքրական է, 1401 թվականին Թավրիզում բնկօրինակված Աստվածաշնչի 216ա Էջի լուսանցքում եղած Երաժշտախումը պատկերող մանրանկարը (ձեռ. № 184): Այսուեղ նկարված են չորս երաժիշտներ, որոնցից երկուը Հարվածային գործիքներ են նվազում՝ մեկը զափ է զարկում, մյուսը մի այլ հարվածային գործիք. Նկարը միազնուն է, փոքրագիր, նկարված ներքին լուսանցքում (մասամբ քայլաւոյն է): Մա ուշագրավ է նաև նրանով, որ նույն Էջի աջակողմյան լուսանցքագրում նկարված է զարզայան զիմին, Հավանարար լարի վրա կանգնած մի լարախաղաց. նվազախումբը նվազում է այդ լարախաղցի համար (թերթ I, նկ. 4):

### Փողային Երաժշտական գործիքներ

Ինչպես Հարվածային, այնպես էլ փողային գործիքները բաժանվում են մի շաբաթ տեսակների: Այսպես, օրինակ,

Մեինք — Փողացին դործիքներից ձեռապերում ամենից շատ պատահում է սրբնոր: Սրբնութերի հանդիպում ենք Հիմնականում ավետարաններում, ծննդի տեսարանը պատկերող կանոնական նկարում:

Աշքի են ընկնում հատկապիս երկու տիպի սրբնութեր:

ա. Մեինզներ, որոնց բնուանի կողմբ նեղ է և քանի զնում ներքի մասը լայնանում է: Այս տիպի սրբնութերից ամենավաղը հանդիպում ենք 1304 թվականին Նախիջևանում Սրբեան ծաղկողի նկարապարդած № 3722 Ավետարանում: Չեսապիք 176ա էջի լուսանցքում նկարված է մի Հովիլ սրբնութեր նվազելիս: Սրբնոր, զնալով դեսպի ներքի լայնանում է, վրան ունի երեք անցք: Հովիլի մոռ նկարված են նաև ոչխարներ: Հետաքրքիր է նաև Հովիլական տարագը (թերթ III, նկ. 6): Այս նույն թվականին, նույն տիպի սրբնութեր նկարված է նաև № 6253 ձեռապրում:

XIV դարի նշանավոր մանրանկարից Թորոս Տարօնացին (աշխատել է Հիմնականում Գլածորում) 1323 թվականին ծաղկած իր Ավետարանում նկարել է մի Հովիլ սրբնութեր նվազելիս: Հովիլի կողքին նկարված են ոչխարներ, բնուաններին կոնաչ տերեներ. թվում է, թե այդ կենդունիները պատիմները վեր ցցած ունենում են սրբնութեր զեղդեղամորին: Հովիլի աջ ձեռքի մատները զրված են սրբնոր անցքերի վրա և սրբնութեր ծայրամասում երեսում է միայն երկու անցք (ձեռ. № 6289, թերթ I, նկ. 5):

Այս տիպի սրբնութեր կուն նաև ավելի ուշ շրջանի ձեռապրերում, օրինակ 1590 թվականին Մոկաց աշխարհում ներսես Կոփսկովսի նկարապարդած Ավետարանում (ձեռ. № 5783, էջ 4ա, թերթ IV, նկ. 8), XVII դարում, Բաղեշում Հովհաննես ծաղկողի նկարապարդած Ավետարանում (ձեռ. № 317, էջ 2ա, թերթ II, նկ. 12), ինչպես նաև մի այլ Հովհաննեսի կողմից 1647 թ. նկարապարզված ձեռապրի մեջ (ձեռ. № 5634, էջ 25բ, թերթ V, նկ. 10):

Սրբնութեր կան նկարված նաև զարդարաներում. օրինակ 1360 թվականին Դրիմում նկարապարզված Ճաշոցի սկզբնաթերթում նկարված է մի զեղեցիկ «Ե» տառ, որի վրա կանգնած Հովիլներից մեկը սրբնութեր է վիշում (ձեռ. № 7741):

բ. Եղեգնյա սրինգ — Սա բարսել, մինչև վերջ միևնույն արամագիծն ունեցող երաժշտական դործիք է (Հովիլական սրինգ): Այս սրբնութերից ամենավաղը հանդիպում ենք № 212 ձեռապրի 246ա էջում: Տեքստում, փոքրադիր նկարված են երկու կին, որոնցից մեկը զափ է զարկում, իսկ մյուսը՝ սրինգ փշում: Կանանց մոտ զրված են սահորներ և թասեր (թերթ II, նկ. 13): Սրբնութերի ինչպես առաջին, այնպես էլ այս երկրորդ տեսակի պատկերը գտնում ենք մեզ արդեն ծանոթ № 184 ձեռապրի լուսանցքում՝ 1401 թվականին նկարված, երաժշտախմբի նվազածուներից երկուսի ձեռքերին:

Հետաքրքրականն է № 5512 ձեռապրի 2ա էջում նկարված Հովիլական սրինգը: Այս սրինգը սովորականից ավելի երկար է, վրան երեսում են հինգ անցքեր, իսկ վերելում՝ բերանի մոտ, ինչ որ խաչաձև ձգված թելեր. ձեռապիքը զրված է 1418 թվականին, Աղթամարում. ծաղկողն է Դանիելը (թերթ III, նկ. 1): Նույնառիս սրինգներ կան նաև բոլ Հայաստանում XV դարում նկարապարզված № № 4826, 5511 ձեռապրերում:

Որոշ ձեռապրերում սրինգահար Հովիլը նկարված է լինում՝ ծալապատիկ նստած դիրքով: Այդպիսիք են, օրինակ, 1471 թվականին Արծկեում՝ նկարապարզված № 7782 Ավետարանի 1ր էջի (թերթ I, նկ. 6), ինչպես նաև № 4778

ձեռագրի նմանատիպ նկարները (հմմ. նաև XVI—XVII դարերում ընդօրինակված № № 276, 9229 ձեռագրերը):

**Խազմական փող** — Ձեռագրերում ուազմական փողերի պատկերներ սակագի են հանդիսաւմ:

Հակոբ Զուղացեցու նկարագարդած «Պատմութիւն Աղ. Մակեղոնացւոյ» ձեռագրում, որը ուրույն տեղ է գրավում աշխարհիկ բնույթի իր նկարներով, բազմատեսակ երաժշտական գործիքների կողքին, տեսնում ենք նաև մի զինվորի՝ ուազմական փող փշելիս: Սա մետաղյա մի գործիք է, որի ծայրամասը բալով լայնանում է (ձեռ. № 5472, էջ 47ա, թերթ V, նկ. 5):

Խազմական փողի ավելի հետաքրքրի տեսակ նկարված է դարձյալ Աղ. Մակեղոնացու վարք-պատմությունը բովանդակող № 3387 ձեռագրում, որը նկարագարդված է Սովորանում 1635 թվականին: Ձեռագրի 112ր էջում պատկերված փողահարի պիխարկից նրեւում է, որ նու զինվորական է. փողը բերանի մտում նեղ է, մեջտեղում ունի գնդիկավոր մի մաս, որից հետո փողը շարունակվում է, իր ծայրամասում լայնանալով (թերթ II, նկ. 9):

Հեփուներ — Փողային գործիքներից բավականին շատ նկարված են լինում նաև շեփորներ: Սրանք նույնպես մետաղյա են: Հեփորների մեծ մասը նկարված է Ավետարանների «Եկեղին փողահարությունը» տերունական նկարում, չորս փողահարների հետ: Հետաքրքրի է 1496 թվականին, Վանում, նկարից Արքահամի կողմից ծաղկված մի Ավետարանի 12ր էջի տերունական նկարում եղած շեփորը: Բերանի կողմը բարակ է, ապա ծայրամաս շհասած դառնում է կիսակոր և միանդամից ծայր է առնում լայն փողաբերանը (ձեռ. № 5303, թերթ III, նկ. 7): Ճիշտ նույն տիպի շեփոր է նկարված նաև № 1579 ձեռագրում:

Հաճախ պատահում են նաև շատ երկար շեփորներ, դրանք Գարբիել հրեշտակապետի շեփորներ են (ձեռ. № 6325, էջ 15):

**Գալարափող** — Բատ ձեռագիր մանրանկարների գալարափողերը հիմնականում պատրաստված են մետաղից: Գալարափողի նմուշներ հանդիսաւմ ենք մեծ մասամբ XVII դարի ձեռագրերում, որոնցից է 1678 թվականին, Վասպուրականի Ավրնդաց դյուղում նկարագարդված № 8688 ձեռագրի 10ր էջում եղած գալարափողը (թերթ I, նկ. 3): Գալարափողի գեղեցիկ օրինակներ կան 1686 թվականին Էջմիածնում, Մարկոս ծաղկողի կողմից նկարագարդված № 349 Աստվածաշնչի 89ր էջում (թերթ IV, նկ. 11): Ավելի ուշ (1692 թ.), դարձյալ Ավրնդաց դյուղում Կարապետ երեցի ծաղկած № 5269 ձեռագրի 23ր էջում, գտնում ենք գալարափողի մի այլ նմուշ (թերթ II, նկ. 11): Սրան շատ նման է № 7677 ձեռագրում նկարվածը: Գալարափողերի տարրեր տեսակի նկարներ կան նաև № № 8178, 8367, 8693, 3662 և այլ ձեռագրերում:

**Սղցերափող** — Սղցերափողի գեղեցիկ օրինակ է պարունակում 1433 թվականին, Արձեշում, Մինաս ծաղկողի նկարագարդած № 6570 ձեռագրի 152ր էջի լուսանցագարդը, ուր հովհանք նստած նվազում է երկար ու կիսակոր և սղցերափողը (թերթ III, նկ. 5):

Սղցերափողի մի այլ օրինակ, որն ավելի կարև է ու լայն, դարձյալ բնորոշ իր կիսակորությամբ, նկարված է № 6670 ձեռագրի 138ր էջում գծանկարով (թերթ II, նկ. 5): Ճիշտ նույն տիպի նկար կա նաև № 4778 ձեռագրի 6ա էջում (թերթ V, նկ. 12):

**Չուռնա** — Ձուռնայի ցայտուն օրինակ է № 5783 ձեռագրի 17ր էջի տերու-

նական նկարում պատկերված դործիքը: Նկարված է զուռնան իր բոլոր մանրամասներով, երեսմ են շորս անցքեր (թերթ IV, նկ. 4): Զուռնայի մի այլ օրինակ կա № 6670 ձեռագրի 130ր էջում (թերթ II, նկ. 6):

Զուռնայատիալ ուշագրավ դործիք է Երուսաղեմի № 4784 ձեռագրում նկարվածը: Զեռագիրը 1434 թվականի է<sup>1</sup>:

Պարկապղուկ.— Պարկապղուկի նմուշներ կան նկարված զլխավորապես XVII դարի ձեռագրերում: № 6670 ձեռագրի ժողովածուի 138ա էջում նկարված է պարկապղուկ նվազող մի կին (թերթ II, նկ. 7), իսկ № 9599 ձեռագրի 188 էջում մի տղամարդ (թերթ II, նկ. 2):

### Լարային գործիքներ

Լարային գործիքների տարատեսակները ձեռագրերում ամենի շատ են և դժվար է որոշակիորեն զատել միմյանցից ու որոշել նրանցից յուրաքանչյուրի անունը. ուստի մեր կատարած խմբավորումը պայմանական է:

### Սագ և սազատիալ լարային գործիքներ

Սագի ամենահին նկարը գտնվում է 1211 թվականին Հաղբատում նկարագրված Ավետարանի խորաններից մեկի լուսանցաղարդում. այսակ նկարված է նույնու տակ ծալապատիկ նստած մի աշուղ, սաղ նվազելիս (ձեռ. № 6288, էջ 15ա): Սագի զլխսի մասում նկարը մաշված է և պարզ չի երևում ու լարերի բանակը, ոչ էլ զլխիկի ձեր. միայն կարելի է ջոկել շորս լարիչները:

1461 թվականին ընդօրինակված № 3884 ձեռագրի («Մամգիրք») 85ա էջում, որպես Յուլ Համաստեղության խորհրդապատկեր, նկարված է ցողի մեջքին նստած մի կին, որը սաղ է նվազում: Այս սազը շատ յուրատեսակ է. ունի բարակ ու երկարավուն զրիֆ, զլխիկի մասում զիղղազածն է և վերջանում է սուր ծալրով, ունի շորս լարիչ (թերթ IV, նկ. 5):

Այս նույն գործիքին շատ նման է 1705 թվականի № 4725 ձեռագրում եղած սազը:

Նադաշ Հովհանթանի տաղարաններից մեկում (ձեռ. № 4426, էջ 40ր) նկարված է սազատիալ լարային մի գործիք, որը խամրած է, ու պարզ չի երևում, սակայն տեսնվում են շորս լարիչ ականջները. գործիքի իրանը տանձածն է (թերթ IV, նկ. 7):

1411 թվականի № 225 ձեռագիր Ավետարանի 3ա էջում նկարված է ծալապատիկ նստած մի կին, ձեռքին սազատիալ լարային գործիք (թերթ VI, նկ. 6):

XIV դարի նշանավոր ծալկող Ավագի Տփղիսում նկարագրված Աստվածաշնչի մեջ նկարված «Ե» զարդատառի մեջ ևս ներկայացված է այդպիսի մի գործիք: Լարերը շեն նկարված, բայց շորս լարիչ-ականջները վկայում են այն մասին, որ գործիքը բառալարյան է եղել (ձեռ. № 6230, էջ 258ր, թերթ IV, նկ. 2): Դարձյալ նույն «Ե» զարդատառի մասն է կազմում № 206 ձեռագրում նկարված լարային գործիքը: Սագի նմանվող երաժշտական գործիք նվազողի պատկերով է ստեղծված նաև № 6776 ձեռագրի 40ա էջի սկզբնաթերթի Քառորդ, ինչպես նաև № 184 ձեռագրի 127ա էջի «Ե» զարդատառի մի մասը:

<sup>1</sup> Այս ձեռագրի մանրանկարների հետ ծանոթացել ենք պրոֆ. Ս. Տեր Ներսիսյանին պատկանող միկրո-ժամանակների միջոցներ:

Աւշապրավ է 1679 թվականին կղմիածնութ նկարագարդված № 509 ձեռագիր ժամագրի 242ա էջում նկարված «Ե» սկզբնաւոտոր, որի ծայրամասերը իրենցից ներկայացնում են երկու մարդու առառկերներ, նրանցից մեկը ձեռքին ունի սաղատիպ, իսկ մյուսը՝ հարվածող երաժշտական գործիք (թերթ VI, նկ. 2):

Լարային գործիքներ շատ կան նկարված Սաղմոսներում (Դամիթ մարզարեի նկարը), կամ Ավետարանի «Հարսանիք Կանայում» տերունական նկարում, որտեղ շատ հաճախ հարսանիքուների շարքում նկարված է լինում նաև զուսան: Այս տեսակետից հետաքրքրական է XV դարում նկարագարդված № 5511 ձեռագիրը, որի 4ա էջում կտ մի զուսան, ձեռքին լարային գործիքը գործիքի զրիֆի վրա կան 11 լարիչ, իսկ պլիսիկը զարդածի է (թերթ II, նկ. 8): Ճիշտ այս նույն գործիքի նմանօրինակը կտ Երուսաղեմի № 2663 ձեռագրում (1414 թ.) ճիայն, այսուեղ գործիքն ունի 9 լարիչ և պլիսիկին արված է վիշտապի կերպարանք: XV դարում նկարագարդված № 4299 ձեռագրի Շարակնոցի 38ր էջում նկարված է Դամիթ մարզարեն 3 լար ունեցող լարային գործիք նվազելիս (թերթ III, նկ. 2): 1390 թվականին Խիզանութ նկարագարդված № 346 ձեռագրի 280ա էջի լուսանցքի համանման երաժշտական գործիքն ունի 6 լարիչ, որոնք դաստվորված են պլիսիկի վրա՝ երկու կողմից (թերթ I, նկ. 7):

Առաքել ծաղկողի կողմից, 1599 թվականին Արզրումում նկարագարդված Սաղմոսարանում ևս Դամիթ մարզարեն լարային սաղատիպ գործիք է նվազում. պլիսիկի վրա կա վեց լարիչ. Դամիթի աջ ձեռքի ցուցամատք նկարված է շատ երկար, բայց երեսութիւն ցուցք առլու համար, որ մատով խփում է լարերին (ձեռ. № 2660, էջ 40ր, թերթ I, նկ. 2):

Մրան նման են նաև № № 225, 272 ձեռագրերում նկարված սաղանման երաժշտական գործիքները:

Նույն տիպի, բայց ավելի շրեղ նկար կա XVII դարում նկարագարդված № 350 ձեռագրի 263ր էջում: Այսուեղ Դամիթ մարզարեի ձեռքի լարային գործիքն ունի 12 լարիչ, ուստի՝ այդքան էլ լար (թերթ III, նկ. 4):

Աւշապրավ է XVI դարի № 6325 ձեռագրի 8ր էջում նկարված գուսանի ձեռքի լարային գործիքը, իբ վեց լարիչներով. լարերի ներքեի մասում կա հենակ (թերթ VI, նկ. 1), նման գործիք է նվազում նաև 1596 թվականի № 6828 ձեռագրի 5ր էջում նկարված գուսանը. գործիքը, որի վրա նույնական լարիչներ կան, նա բռնել է հորիզոնական դիրքով:

Իր ձեռով մի փոքր տարրեր է XVII դարի № 5472 ձեռագրի 18ր էջում նկարված լարային գործիքը, որի պլիսիկի մասը թեքվում է, հորիզոնական դիրք ընդունում: Նրա վրա կան 15 մանր ու խոշոր լարիչներ (թերթ V, նկ. 3):

XVII դարի № 9599 ձեռագրի 54ր էջում նկարված է ուղտի վրա նստած մի երաժիշտ կին. Նրա ձեռքի երաժշտական գործիքը նույնական տանձածե է, շեմքեկից հետո թեքվում է, կիսակործում դեսի պլիսիկը, պլիսիկի վրա կա 5 լարիչ (թերթ II, նկ. 1): Այս նույն ձեռագրի 113ա էջում ևս նկարված է լարային գործիք, ավելի պարզ ու հասարակ գծանկարով. նկարի կողքին գրված է՝ «կին մի որ տարապուլուզ կու զարնէ»:

Քամանշա — Ձեռագրերի մանրանկարներում տուան նյութեր կան նաև այլ լարային երաժշտական գործիքների մասին: XVII դարի № 5472 ձեռագրի 123ր էջում նկարված է բամանշա իր աղեղով (թերթ V, նկ. 7): Ավելի ուշ շրջա-

նում, 1765 թվականի № 4426 ձեռագրի 12ր էջում նկարված է ժամանակակից բանանշա (թերթ IV, նկ. 1):

Քամանչայի օրինակներ հանդիպում են նաև ղարդատառերում, հատկապես Ավետարանների սկզբնաթերթերում, օրինակ, Վարագում 1600 թվականին նկարագարդված № 2804 ձեռագրի 36ա էջի «Գիրք» բառի վերջին «Ք» տառը իրենից ներկայացնում է մի երաժիշտ, որը ձախ ձեռքում պահել է քամանչան, իսկ աջում՝ քամանչայի վրա շարժում է աղեղը (թերթ II, նկ. 10): Ճիշտ նույն ձեռվ, նույն «Ք» տառը նկարված է նաև նույնուրդին ժամանակակից № 5794 ձեռագրում:

Տավիլ — Այս լարային գործիքի գեղեցիկ նմուշ է, № 2627 ձեռագրի 26ր էջում նկարված Դավթի ձեռքի տավիլը: Չեսաղիրը նկարագարդել է, XIV դարի անվանի մանրանկարիչ Սարգս Պիծակը (թերթ VI, նկ. 3):

Սաղմոսարան — Սաղմոսարանն ունի տասը լար և նվազվում է ձեռքի փոքրիկ կնտնտոցով. Դրիմում, 1399 թվականին նկարագարդված № 2040 ձեռագրի 6ր էջում պատկերված լարային գործիքը հավանաբար Սաղմոսարան է: Գործիքն ունի տասը լար (թերթ IV, նկ. 4):

Քանոն — Այս լարային գործիքը նկարված է XVII դարի նկարիչ Հակոբ Զուղայեցու մեջ արդեն ծանոթ № 5472 ձեռագրի 123ր էջում (թերթ V, նկ. 1): Նման լարային գործիք է նաև XVII դարի № 7090 ձեռագրի 4ր էջում նկարվածը:

Արփա — Բաղմաթիկ օրինակներ կան հատկապես XVII դարում նոր-Զուղայեցու ընդօրինակված և նկարագարդված ձեռագրի Աստվածաշնչերում, օրինակ՝ № № 189, 200, 201, 349 և այլ ձեռագրերում:

Արփայի մի տեսակ էլ գտնում ենք Հակոբ Զուղայեցու վերոհիշյալ ձեռագրի 123ր էջում (թերթ V, նկ. 9):

Քնար — Սաղկող Հայրապետի 1686 թվականին նկարագարդված № 349 ձեռագրի 113ր էջում կա քնարի գեղեցիկ մի օրինակ: Կինը կանգնած է ողջ հասկով, գեղեցիկ սարագով և քնար է նվազվում (թերթ IV, նկ. 10):

Քնարի մի այլ օրինակ էլ նկարված է, 1679 թվականի № 509 ձեռագրի 241ր էջում (թերթ VI, նկ. 5), ինչպես նաև XV դարի № 7605 ձեռագրում:

Սրանք են երաժշտական գործիքների այն հիմնական տեսակները, որոնց պատկերները գտնել ենք Մատենադարանի հայերեն ձեռագրերի մանրանկարներում: Հետագա որոնումներում, հատկապես այլ վայրերում պահվող Հայկական ձեռագրերից, անշուշտ հնարավոր կլինի երեսն բերել երաժշտական գործիքների պատկերներ պարունակող այլ մանրանկարներ և լրացնել մեր գիտելիքները միջնադարյան Հայաստանում և Հայկական դադթավայրերում կիրառության մեջ եղող երաժշտական գործիքների և նրանց տարատեսակների մասին:

Ա. Բ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

## СРЕДНЕВЕКОВЫЕ МУЗЫКАЛЬНЫЕ ИНСТРУМЕНТЫ В АРМЯНСКИХ МИНИАТЮРАХ

(Р е з ю м е)

Армянская средневековая книжная живопись (миниатюра) является одной из сокровищниц, обогащающей многочисленными веществен-

ными примерами наши представления о различных областях средневековой культуры.

На протяжении ряда лет автор статьи отбирал и копировал изображения предметов, представляющих интерес для изучения истории культуры и быта. На отдельных листах автором были сгруппированы изображения музыкальных инструментов, сельскохозяйственных орудий, воинского снаряжения, письменных принадлежностей, одежды и т. п.

Публикуя шесть листов изображений средневековых музыкальных инструментов, автор разбил их на соответствующие подгруппы—ударные инструменты, духовые и струнные, дав одновременно необходимые сведения о рукописях, из которых скопированы эти миниатюры. В статье дается краткое описание этих инструментов, на основе их внешних признаков. Специальное исследование публикуемых материалов не входило в задачу автора.

A. B. GEVORKIAN

### LES INSTRUMENTS DE MUSIQUE MEDIEVAUX DANS LES MINIATURES ARMENIENNES

La miniature arménienne nous est un trésor inépuisable de connaissances et de données matérielles pour l'étude des différents aspects de l'activité culturelle au moyen âge.

De longues années ont été nécessaires à l'auteur de cet article pour dégager et reproduire les objets pouvant l'intéresser du point de vue de l'histoire de la culture et des mœurs.

Les reproductions sont groupées en instruments de musique, outils agraires, armes, papeterie, vêtements, etc... Les instruments de musique médiévaux sont présentés sur six planches: instruments à percussion, à vent, à cordes. Ces planches sont accompagnées de légendes explicatives nous renseignant sur les manuscrits d'où sont tirées les miniatures.

L'auteur donne une description des instruments d'après leurs indices extérieurs.

Cet article ne vise nullement à une étude approfondie des matériaux publiés.

















